ճհե.

Ջարալը օղլու սեաստու փաշայն բազում զրկանս և կոտորածս արարեալ ի Թօխաթ, և ապըստամբեալ ի Թագաւորէն. զորս ի վերայ կարգեցին, և յաղթեալ զնա, բերին զգլուխ նորա յաւուրս յայսոսիկ ի կոստանդնուպօլիս։ Դարձեալ արապ խառըմ մի երբեմն մեծ պաշտօնեայ ի սառային տաճկաց և յաղագս յանցանաց սիւրկիւն արարեալ, ապստամբեցաւ. և զօրաժողով եղեալ իբր տասն հազարօք, հարուածս մեծամեծս հասուցանէ տաճկաց, մինչև զհաճըլարսն կոտորեաց, և զայլ բազում չարիս արար, վասն որոյ և տաճիկք ի հոգս են։ ([Հ. Մկրտիչ Անանեան] առ Մելքոնեան, 1757 մայիս 19. [Կ. Պոլիս])։

ճհզ.

Շինուած գրքատան վասն չկարելոյ բուսուցանել զանցեալ ծախսն, յայսմ ամի անգործ մնաց։ (Հ. Գաբր. վրդ. առ Հ. Մկրտիչ Անանեան, 1757 յունիս 22. [Ս. Ղազար])։

ճհէ.

Յետ պայրամին եմուտ խորհուրդ ի մէջ այլազգեաց վասն ապստամբութեան, և գտան ուրեք ուրեք այնպիսի ոմանք. և ի խեղդ մահու վճարեցան. և զի մի՛ տրտունջ նոցա զօրասցի՝ եղև եասախ խալփախից և անկարգ զգեստուց հրէից և քրիստոնէից։... Գիտեմ զի քան զմեզ աւելի բարւոք իմացայք զհրաշալի յաղթութիւն Թագուհւոյն ընդդէմ պռանտէպուրկաց, և զազատութիւն բրակայ քաղաքի բոյեմիոյ։ (Հ. Իգն. առ Մելքոնեան, 1757 յուլիսի 15. ի Կ. Պոլիս)։

ճհը.

Տետր մի հնարեցին հայք, զոր տան ամենեցուն ձրի, յորում գրեալ կայ պատմութիւն ինչ հանդերձ կարճ վիճաբանութեամբ. իբր թէ սուրբն Ներսէս Լամբրոնացին զկնի տարսոնի ժողովոյն՝ ի Կոստանդնուպօլիս գնացեալ դեսպան, յաղթեալ է բոլոր վարդապետաց յունաց, ջատագովեալ զմոլորութիւնս հայոց, որոց բովանդակն սուտ է և զրպարտական, զմին ի նոցանէ առի և առաքեմ ի վանս։ (Հ. Մկրտիչ առ Մելքոնեան, 1757 յուլիս 19. [Կ. Պոլիս])։

ճհթ.

Զայս բառարանս [Ստ. Ռոշքայ Լեհացւոյ] տեսի ես ի ստանիսլաւ քաղաքի, լիագոյն քան զմեր սակաւ ինչ, է ի հայէ առ լատին, և ի լատինէ ի հայ լեզու, ստուարութիւն է յայսմաւուրին չափ։... ողորմած հոգի Տէր գրիգոր ըզուանջայու Աւագէրէցն նման էր սակաւ ինչ կերպարանօք և բարուք հօրս մերոյ ողորմած հոգի Մխիթար Աբբային, վասն զի զայս սքանչելի այրս ոչ միայն ողբաց ազգն հայոց այլ և առ հասարակ սարմատացիք, ռուզք, յոյնք, հրէյայք, տաճիկք, մինչև չուարեալ մնացի ընդ առն մեծասքանչ համբաւոյն։ (Հ. Սահակ առ Հ. Մկրտիչ Անանեան, 1757 յուլիսի 20. [տեղի?])։